Funded by the European Union

Եվրոպական միությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան (փուլ II)

Իրականացման ժամանակահատված: 15.08.2024 - 14.08.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 732 800

Ընդհանուր բյուջե: € 2 732 800

Իրականացնող կազմակերպություն(ներ):

NIRAS International Consulting

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

facebook.com/groups/642338200281272

Նախագծի նկարագրություն:

Եվրոպական միությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան ծրագիրը (փուլ II) իրականացվում է NIRAS-ի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ծրագիրն ուղղված է Արևելյան գործընկերության երկրներում գենդերային հավասարության և կանանց զորեղացման խթանմանը՝ բարեփոխումների, քաղաքականությունների և օրենսդրական աշխատանքի պլանավորման և իրականացման մեջ գենդերային մեյնսթրիմինգի ապահովման միջոցով՝ գործընկերության վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս*, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա: Պատուհանը տրամադրում է փորձագիտական խորհրդատվություն, կարողությունների զարգացում, գիտական արտադրանք, ինչպես նաև կառավարությունների, քաղաքացիական հասարակության և ԵՄ ինստիտուտների միջև առաջավոր համագործակցությանն ուղղված աջակցություն՝ գենդերազգայուն բարեփոխումները ֆասիլիտացնելու նպատակով: Այս ճանապարհով Եվրոպական միությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհանն ուժեղացնում է գենդերային հեռանկարը հանրային քաղաքականությունների ու բարեփոխումների մեջ ներառելու՝ հանրային ինստիտուտների կարողությունը՝ ի լրումն կանանց իրավունքներով զբաղվող և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների զորեղացմանը՝ կառավարությունների հետ գենդերային հավասարությունը խթանելուն ուղղված ապացուցահեն երկխոսություն ունենալու նպատակով:

*Նշում. Բելառուսի հետ կապված Եվրոպական միությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհանն աջակցություն է տրամադրում միայն բելառուսյան քաղաքացիական հասարակությանն կազմակերպություններին:

Ակնկալվող արդյունքներ:

1. Ինստիտուցիոնալ հզորացում. հանրային ինստիտուտները կատարելագործում են գենդերային հեռանկարը հանրային քաղաքականությունների և բարեփոխումների մեջ ներառելու իրենց կարողությունը.
2. Քաղաքացիական հասարակության զորեղացում. կանանց իրավունքներով զբաղվող և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները հզորացնում են կառավարությունների հետ ապացուցահեն երկխոսություն ունենալու իրենց կարողությունը: